№ 3 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 9 — 1903 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 9 № 3

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հռիփսիմէ Մարտիրոսեան Բարսեղեան իր Բարսեղ և Վաղարշակ Կարապետեան որդկերանց հետ յայտնում են ազգականներին և ծանօթներին առաջինի ամուսնու և վերջինների հօր՝

ԿԱՐԱՊԵՏ ԲԱՐՍԵՂԵԱՆ ԲԱՐՍԱՄԵԱՆՑԻ

մահվան մասին, որ վախճանվեց ներկայ յունվարի 6-ին, և խնդրում են չսորհ բերել յուղարկաւորութեանը հինգշաբթի, յունվարի 9-ին, առաւօտեան 10 ժամին, Գոգոլէվսկայա փողոցի վրա գտնվող ընակարանից, տ. Այվազովին դէպի Կուկիայի ս. Աստուածածնի Նորաշէն եկեղեցին, իսկ այնտեղից Խոջեվանքի գերեզմանատունը։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընթերցանութեան ապիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պետերբուրգից. Նամակ Բագուից. Նամակ Աստրախանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Տանջանքների աշխարհից։

ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

«Մշակի» մէջ զետեղված տեղեկութիւններից մեր ընթերցողները դիտեն, որ զանազան անձինք նուիրել են գումարներ «Մշակի» տարեկան համարները ուղարկելու գիւղերին և հասատութիւններին։ Մենք շատ տեղերից ունենք ստացած խնդիրքներ՝ ուղարկելու նրանց լրագիրը ձրապէս։ Մենք անկարող կը լինենք գոհացում տալ բոլոր խնդրողներին և գերադասութիւն կը տանք գիւղերին, դիւղորների խմբերին, դպրոցներին և ժողովրդական գրադարաններին։

Նուէրների շնորհիւ մենք կարողութիւն ստացանք բաւարարութիւն տալու այնպիսի անձանց, որոնք ներկայումս իրանց սեփական միջոցներով հնարաւորութիւն չունեն լրագիր ձեռք բերելու, մինչդեռ նրանք ընթերցանութեան պահանջ են զգում կամ ցանկանում են ընտելանալ ընթերցասիրութեան։

Սակայն յոյս կապել միայն նուիրողների վրա—գործնական և խելացի մի բան չէ։ Լաւ է, եթէ կը գտնվեն նուիրողներ և մի երկու տարի կօգնեն այս կամ այն գիւղի գրագէտներին՝ բաւարարութիւն տալու նրանց ընթերցասիրութեան կարիքին։ Եւ դժուար էլ է պահանջել, որ ձրի օրինակները ուղարկվեն միշտ միևնոյն գիւղերին, երբ ուրիշ շատ գիւղեր սպասում են նոյնպէս իրանց համար լրագիր ուղարկողների։ Արդարացի և խելացի կը լիներ, որ այն գիւղերը, որոնք մի քանի տարի օգտվել են լրագրի ձրի օրինակից և ընտելացել են ընթերցանութեան, իրանք որոնէին տեղական միջոցներ լրագիր բերելու համար և այդպիսով թէ հասարաւորութիւն տային ձրի օրինակները ուրիշ տեղեր ուղարկելու և թէ ապացուցանէին, որ ընթերցանութիւնը նրանց համար այնպիսի պահանջ է սկսում դառնալ, որի համար մարդիկ պատրաստ են իրանց միջոցների մի մասը գործադրելու։

Մենք ուրախութեամբ արձանագրում ենք, որ այս տարի մի քանի տեղերում գիւղացիների խմբեր հանդանակել են միանց մէջ գումարներ և ստորագրվել են լրագրի տարեկան օրինակին ու ձեռք են բերել ընթերցանութեան գրքեր։ Սեփական նախաձեռնութեան այդ դէպքերը արժանի են խրախոյսի, որովհետև այդտեղ մարդիկ չեն սպասում պատահական նուէրների, այլ իրանք են միջոցներ որոնում իրանց ընթերցասիրութեան պահանջին լրում տալու։

Մենք կանգ ենք առնում այս հանգամանքի վրա, որովհետև ընթերցանութեան տարածմանը ժողովրդական մասսայի մէջ տալիս ենք կարևոր նշանակութիւն։ Եւ որքան շուտ հաստատվի գրքի և մամուլի միջոցով կապ գիւղի ու քաղաքի, աշխատող երկրագործի և ինտելիգենտ դասակարգի մէջ, այնքան շուտ կը սկսի գիւղը օգտվել այն բարիքներից, որ կարող են տալ գիտութիւնը և արհեստը։ Եւ մենք ունենք բազմաթիւ ապացոյցներ, որ գրքի և լրագրի ընթերցանութեան ընտելացած գիւղերը առաջադէմ են իրանց արդիւնագործութեան և հասարակական գործառնութիւնների մէջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Դեկտեմբերի 23-ին

Այսօր տեղիս հայ հասարակութիւնը ճաշկերոյթ ունէր ի պատիւ Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեանի, որ պիտի չուտով գնայ Էջմիածին։ Ճաշկերոյթին մասնակցեցին տեղիս գաղութի նշանաւոր անձինք, որոնք յայտնեցին իրանց բարի ցանկութիւնները Մեսրոպ վարդապետին, որ ստանալով բարձր գիտնական աստիճան՝ մագիստրոսութիւն, պիտի իբրև առաջին կարապետ Ռուսահայոց հայ հոգևորականութեան մէջ, բարի նախանձ զարթեցնէ իր ընկերակիցների մէջ, որոնք՝ ստանալով ճեմարանական և արտասահմանեան ուսումն՝ չեն կարողանում Էջմիածնում ստեղծել մեր յարգելի Մխիթարեանների օրինակով մի գիտնական մթնոլորտ։

Ինչպէս յայտնի է, անգործութեան յատկանիշն է բամբասանք, մանր հաշիւներ, եսապաշտութիւն, հիւանդավախութիւն, որն այնքան տարածված է մեր հոգևորականների մէջ, որ նրանք միշտ գանգատաւոր են, թէ հիւանդ են և միշտ բժշկվելու կարիք են զգում, թէև տեսքով առողջներից առողջ են երևում։ Դա մասամբ անգործութեան և անչարժ կեանքի հետևանք է, և քանի որ մեծամասնութիւնը մի առանձին ոգևորող զբաղմունք չունի, ուստի նա իր ուշք ու միտքն իր վրա է դարձրած։ Ի հարկէ, Էջմիածնում կան հոգևորականների մէջ անձինք, թէև դեռ շատ սակաւաթիւ, որոնք զգում են, որ մտաւոր աշխատութեան մէջ կարելի է գտնել մտքի թարմութիւն և հոգեկան հանգստութիւն. բայց դրանք անզօր են հրապուրիչ դարձնել հոգևորականի կեանքն Էջմիածնում, հեռու մտաւոր կենտրոնից։ Երբ կար լրագիրների մէջ հարց, թէ ինչու Էջմիածնի միաբանութիւնը Մխիթարեանների համեմատութեամբ այնքան քիչ մտաւոր աշխատութիւններ է արտադրում, Ց. վ. ճգնում էր ապացուցանել, որ իբր այդ սխալ է և ի միջի այլոց մատնատոյց էր անում Մեսրոպ վարդապետի վրա, որի նման, իբր թէ չը կայ Մխիթարեանների միաբանութեան անդամների մէջ։ Զը հերքելով Մեսրոպ վարդապետի արժանաւորութիւնները, կասենք, որ Էջմիածնի միաբանութեան դեռ երկար ժամանակ է հարկաւոր, որ տայ մեզ այնպիսի գիտնական հրատարակներ, որոնք Մխիթարեանների և ազգի պարծանք են համարվում, օրինակ Ալիշան, Բագրատունի, Զարբհան, Այտընեան և այլն և այնուհետև Էջմիածնի միաբանութիւնը սրանց հանդէպ ոչ ոք չունի իր մէջ, բայց երբ ճեմարանն սկսել է տալ բաւական լաւ պատրաստված պատանիներ, որոնցից շատերը՝ լրացնելով իրանց ուսումն թէ արտասահմանում, թէ Հայաստանում, ստանում են դոկտորի տարեկան օրինակին ու ձեռք են բերել ընթերցանութեան գրքեր։ Սեփական նախաձեռնութեան այդ դէպքերը արժանի են խրախոյսի, որովհետև այդտեղ մարդիկ չեն սպասում պատահական նուէրների, այլ իրանք են միջոցներ որոնում իրանց ընթերցասիրութեան պահանջին լրում տալու։

Մենք կանգ ենք առնում այս հանգամանքի վրա, որովհետև ընթերցանութեան տարածմանը ժողովրդական մասսայի մէջ տալիս ենք կարևոր նշանակութիւն։ Եւ որքան շուտ հաստատվի գրքի և մամուլի միջոցով կապ գիւղի ու քաղաքի, աշխատող երկրագործի և ինտելիգենտ դասակարգի մէջ, այնքան շուտ կը սկսի գիւղը օգտվել այն բարիքներից, որ կարող են տալ գիտութիւնը և արհեստը։ Եւ մենք ունենք բազմաթիւ ապացոյցներ, որ գրքի և լրագրի ընթերցանութեան ընտելացած գիւղերը առաջադէմ են իրանց արդիւնագործութեան և հասարակական գործառնութիւնների մէջ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՆՋԱՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻՑ

(Բժշկի տեսածից ու լսածից)

Դիակների մէջ

—

Զրօրհնէքի օրն էր։

Զանգս ուժգին հնչեց և ծառան շտապով ներս մտաւ առանձնասենեակս յայտնելու, թէ մի ոստիկան ուզում է իսկոյն տեսնել ինձ։

—Ի սէր Աստուծու, պարոն բժիշկ, դարձաւ ինձ հնալով ծանօթ ոստիկանը, երբ դուրս եկայ ընդունարանը, — հանդնվեցէք իսկոյն, գնանք, մի սարսափելի աղէտ է պատահել։

Եւ կառքի մէջ բացատրեց։

Զրօրհնէքի առիթով կառուցված փայտէ ժամանակաւոր կամուրջը ամբոխի ծանրութեան տակ յանկարծ ճաճացել էր ու փլրվել։ Ականատեսները զարհուրելի բաներ էին պատմում։

Մի ակնթարթում գետի երեսը ծածկվել էր մարդկանց գլուխներով, թևերով ու ոտներով։ Մարդիկ գահավիժվել էին կամուրջի բարձրութիւնից, ջախջախվել էին ջարդրդված գերանների ցից մնացած ծայրերի վրա ու խրվել էին —թաղվել փափուկ տղմի մէջ, որն այդ տեղում հաստ չերտ է կազմում գետի տակ։ Ընկնողները, սարսափահար եղած, ձեռները գցել էին մօտ եղողներին, սրանք ուրիշներին և այսպէս մարդկային կոյտեր գրկախառնված գլորվել էին գետը... Սոսկումն աւելանում էր նոյնպէս և նրանով, որ յետևից եկողները, անգիտանալով կատարվածը և ճչոցներ միայն լսելով, առաջ էին հրվել և չերտ-չերտ շպրտվել էին գետը, ինչպէս ոչխարի հօտը, ստացած թափից չը դիմանալով, կարգ-կարգ անդունդն է նետվում ապառաժի վրայից։

—Սարսափելի է, սարսափելի, կրկնում էր ոստիկանը։ Շատերն ազատվել էին, բայց ով գիտէ, քանի հարիւրներ խեղդված են... Ֆչիր, քշիր, շտապեցնում էր նա կառապանին։

Կառապանը ուժով մտրակում էր ձիերին, և մենք կայծակի արագութեամբ սլանում էինք, իսկ դարձեալ ոստիկանին դանդաղ էր թվում մեր արշաւը և նա կրկնում էր անդադար.

—Շուտ, շուտ։

Սոսկալի բօթը երեի արդէն տարածվել էր քաղաքում։

Մարդկային հեղեղներ էին հոսում դէպի աղէտի տեղը, յորդանում ու սեղմվում—ջարդվում նեղնեղ փողոցներում, ցրվում—լայնանում հրապարակների վրա։ Մեր կառքն արդէն դժուարութիւնով էր անցնում և ոստիկանը ստիպված էր անդադար դոռալ, որ ճանապարհ տան։

Կուրի ափերը ծածկված էին մարդկանց գլուխներով, սևացել էր փոքրիկ կղզին, սև պատնէշ էր կանգնած վանքի պարսպի վրա, գլուխների ծով էր ծփում կղզու վրա։

Կառքից իջանք։

—Ճանապարհ, ճանապարհ, կանչում էր ոստիկանը և ժողովրդին թևերով ճեղքում։

Մի խուլ ժխոր էր կանգնած օդի մէջ,—հազարաւոր կոկորդների ահաբեկումից զսպած հառաչն էր այդ։

—Ճանապարհ, ճանապարհ, բժիշկ է բժիշկ, լսում էինք մեր շուրջը և մարդիկ հրում էին իրար, ճանապարհ բանում երկիւղածութեամբ ու պատկառանքով, և այս սարսափահար դէմքերը բոպէաբար յուսաւորվում էին, և թախիծով ու մի տեսակ ազերսանքով մեզ նայում։...

Անցանք մարդկային պատնէշների միջով, քայլեցինք գետի տղմոտ ափով, թռանք լճացած կեղտոտ ջրեր և աչքիս առաջ բացվեց սարսափելի մի տեսարան։

Դիակներ... մի շարք դիակներ...

Ջրից հանած ջրահեղձներն էին սրանք, որոնց տկլորացրած պառկեցրել էին գետափի աւազի վրա, սիրթնած կաչով, կապտած պռօշներով, ահաբեկ դուրս թռած աչքերով... Անչարժ պառկած էին սրանք մէջքերի վրա, բերանները բաց, աչքերը դէպի վեր,—անչնչացած դիակներ, որոնք կարծես դեռ օգնութիւն, գութ էին հայցում երկնքից...

Բժիշկները, ոտները ցեխի մէջ, ծնկները մի փալասի կամ քարի վրա, ճակատներից քրտինքը սրբելով, կռացած հարում էին ջրահեղձներին, որոնց մէջ դեռ ևս կենդանութեան նշոյլ կար։ Մարդիկ խումբ-խումբ օգնում էին բժիշկներին, բարձրացնում էին խեղդվածների թևերը, բարձրացնում ու իջեցնում-կրծքին սեղմում, որ շնչել տան այս անշնչացածներին, որ օդ լցնեն նրանց ջրով լցված թոքերը...

Շատ էին դիակները... կարգ-կարգ չարված էին նրանք... ես չէի հաշւում, բայց ինձ թուում էր, թէ նրանք չարվում էին անդադար իրար կողքի, ծածկում էին կղզեակը, որը փրովում էր լայնանում, անդադար տարածվում, հեռու, հեռու, հասնում հորիզոնին։ Գետինը կորել էր արդէն փռված դիակների տակ, այն ինչ կեղտոտ գետը չարունակում էր անդադար նոր զոհեր շպրտել ափը...

Եւ ես քարացած նայում էի այս առողջ, յաղթանդամ մարմիններին, որոնք այժմ չարված էին ցուրտ գետնի վրա, և մի երկու օրից յետոյ պիտի թաղվէին նոյն պաղ գետնի տակ... Պատերազմի դաշտ չէր այս, դիակներից կարմիր արիւն չէր հոսում, գնդակը չէր, որ մի ակնթարթում վայր էր գլորել այս առոյգ, հսկայ մարդկանց, կուի և յաղթութեան համար չէր, որ եկել էին սրանք այս գետի ափը... Մի ժամ չէր անցել, ինչ ջերմեռանդութեամբ և հրճուանքով լի սրտերով վազել էին այս մարդիկ «խաչը ջուրը գցելու»։ Նրանք մնաց բարով չէին ասել իրանց սիրելիներին, յաւիտենական հրաժեշտ չէին տուել իրանց տուն ու տեղին։ Տներում սահում էր առօրեայ կեանքը, ծխում էր նոյն օջախը և եփվում էր նոյն ապուրը, եթէ միայն ապուր կար տանը։ Եւ տանը մնացածները այս սրտամաշ տեսարանից հեռու սուփրա էին գցում, վրան դարսում էին Աստծու տուածը ու հանգիստ սրտով ապասում էին տան տղամարդին, որ հացի նատեն...

Իսկ տղամարդն այստեղ էր, տկլոր ու կապտած պառկած էր առաջիս։ Եւ հայեացքս կրկին անցաւ դիակների շարանների վրայով, և սիրտս թնդաց,—ականջիս հասան հոգեմաշ, խուլ ճչեր, աչքիս երևեցան զարհուրած, ահաբեկված դէմքեր։ Ճչերը սաստկացան, տարածվեցին տնից տուն, լցրին քաղաքը և մի ընդհանուր գոռոցն գոչիւն դարձան, ահաւոր սարսուռ անցաւ քաղաքի վրայով։ Եւ ահաբեկված երևակայութեանս մէջ ինձ թուաց, թէ հորիզոնի բոլոր անկիւններից վազում էին դէպի գետը բիւրաւոր մարդիկ, կանայք և երեխաներ, կանչելով իրանց կորածին, որոնելով նրանց դիակների կոյտերի մէջ։ Եւ վայնասուն ընկաւ աշխարհ, և կատաղի Կուրը յորդացաւ մարդկանց արտասուքով...

—

Կողքիս բժիշկ ընկերս աղէտի հէնց սկզբից էր այնտեղ և բախտ էր ունեցել մի քանիներին ուշքի բերել և տուն ուղարկել։

—Սրանից էլ յոյս չեմ կորում, ասաց ինձ. կէս ժամ է արդէն՝ ինչ արուեստական շնչառութիւն եմ անում, թերիս մէջ այլ ևս ոյժ չէ մնացել, այս տղերքն էլ հալից ընկել են, աւելացրեց նա ցոյց տալով երկու երիտասարդներ, որոնք հնալով, քրտնքկոխ չարունակում էին հարել ջրահեղձին... Տես ինչ հսկան է։

Ճշմարիտ որ, մի հսկայ էր փռված առաջիս. դէմքի առնական խոշոր գծերը, լայն կրծքի բարձր կամարը, գլանաձև թևերն ու ոտները զօրեղ ֆիզիկական ոյժի առհաւատչեաներ էին։ Եւ, դիտելով այս առոյգ երիտասարդ կազմուածքի յանկարծակի անշնչանալը, մարդ ափսոսանքի մի սուր կսկիծ էր զգում սրտի խորությունից։ Շատերն ազատվել էին, բայց ով գիտէ, քանի՞ հարիւրներ խեղդված են... Ֆչիր, քշիր, չտապեցնում էր նա կառապանին։

Կառապանը ուժով մտրակում էր ձիերին, և մենք կայծակի արագութեամբ սլանում էինք, իսկ դարձեալ ոստիկանին դանդաղ էր թվում մեր արշաւը և նա կրկնում էր անդադար.

—Շուտ, շուտ։

Սոսկալի բօթը երեի արդէն տարածվել էր քաղաքում։

Մարդկային հեղեղներ էին հոսում դէպի աղէտի տեղը, յորդանում ու սեղմվում—ջարդվում նեղնեղ փողոցներում, ցրվում—լայնանում հրապարակների վրա։ Մեր կառքն արդէն դժուարութիւնով էր անցնում և ոստիկանը ստիպված էր անդադար դոռալ, որ ճանապարհ տան։

Կուրի ափերը ծածկված էին մարդկանց գլուխներով, սևացել էր փոքրիկ կղզին, սև պատնէշ էր կանգնած վանքի պարսպի վրա, գլուխների ծով էր ծփում կղզու վրա։

Կառքից իջանք։

—Ճանապարհ, ճանապարհ, կանչում էր ոստիկանը և ժողովրդին թևերով ճեղքում։

Մի խուլ ժխոր էր կանգնած օդի մէջ,—հազարաւոր կոկորդների ահաբեկումից զսպած հառաչն էր այդ։

—Ճանապարհ, ճանապարհ, բժիշկ է բժիշկ, լսում էինք մեր շուրջը և մարդիկ հրում էին իրար, ճանապարհ բանում երկիւղածութեամբ ու պատկառանքով, և այս սարսափահար դէմքերը բոպէաբար յուսաւորվում էին, և թախիծով ու մի տեսակ ազերսանքով մեզ նայում։...

Անցանք մարդկային պատնէշների միջով, քայլեցինք գետի տղմոտ ափով, թռանք լճացած կեղտոտ ջրեր և աչքիս առաջ բացվեց սարսափելի մի տեսարան։

Դիակներ... մի շարք դիակներ...

Ջրից հանած ջրահեղձներն էին սրանք, որոնց տկլորացրած պառկեցրել էին գետափի աւազի վրա, սիրթնած կաչով, կապտած պռօշներով, ահաբեկ դուրս թռած աչքերով... Անչարժ պառկած էին սրանք մէջքերի վրա, բերանները բաց, աչքերը դէպի վեր,—անշնչացած դիակներ, որոնք կարծես դեռ օգնութիւն, գութ էին հայցում երկնքից...

Բժիշկները, ոտները ցեխի մէջ, ծնկները մի փալասի կամ քարի վրա, ճակատներից քրտինքը սրբելով, կռացած հարում էին ջրահեղձներին, որոնց մէջ դեռ ևս կենդանութեան նշոյլ կար։ Մարդիկ խումբ-խումբ օգնում էին բժիշկներին, բարձրացնում էին խեղդվածների թևերը, բարձրացնում ու իջեցնում-կրծքին սեղմում, որ շնչել տան այս անշնչացածներին, որ օդ լցնեն նրանց ջրով լցված թոքերը...

Շատ էին դիակները... կարգ-կարգ չարված էին նրանք... ես չէի հաշւում, բայց ինձ թուում էր, թէ նրանք չարվում էին անդադար իրար կողքի, ծածկում էին կղզեակը, որը փրովում էր լայնանում, անդադար տարածվում, հեռու, հեռու, հասնում հորիզոնին։ Գետինը կորել էր արդէն փռված դիակների տակ, այն ինչ կեղտոտ գետը չարունակում էր անդադար նոր զոհեր շպրտել ափը...

Եւ ես քարացած նայում էի այս առոյգ, յաղթանդամ մարմիններին, որոնք այժմ չարված էին ցուրտ գետնի վրա, և մի երկու օրից յետոյ պիտի թաղվէին նոյն պաղ գետնի տակ... Պատերազմի դաշտ չէր այս, դիակներից կարմիր արիւն չէր հոսում, գնդակը չէր, որ մի ակնթարթում վայր էր գլորել այս առոյգ, հսկայ մարդկանց, կուի և յաղթութեան համար չէր, որ եկել էին սրանք այս գետի ափը... Մի ժամ չէր անցել, ինչ ջերմեռանդութեամբ և հրճուանքով լի սրտերով վազել էին այս մարդիկ «խաչը ջուրը գցելու»։ Նրանք մնաս բարով չէին ասել իրանց սիրելիներին, յաւիտենական հրաժեշտ չէին տուել իրանց տուն ու տեղին։ Տներում սահում էր առօրեայ կեանքը, ծխում էր նոյն օջախը և եփվում էր նոյն ապուրը, եթէ միայն ապուր կար տանը։ Եւ տանը մնացածները այս սրտամաշ տեսարանից հեռու սուփրա էին գցում, վրան դարսում էին Աստծու տուածը ու հանգիստ սրտով ապասում էին տան տղամարդին, որ հացի նատեն...

Իսկ տղամարդն այստեղ էր, տկլոր ու կապտած պառկած էր առաջիս։ Եւ հայեացքս կրկին անցաւ դիակների շարանների վրայով, և սիրտս թնդաց,—ականջիս հասան հոգեմաշ, խուլ ճչեր, աչքիս երևեցան զարհուրած, ահաբեկված դէմքեր։ Ճչերը սաստկացան, տարածվեցին տնից տուն, լցրին քաղաքը և մի ընդհանուր գոռոցն գոչիւն դարձան, ահաւոր սարսուռ անցաւ քաղաքի վրայով։ Եւ ահաբեկված երևակայութեանս մէջ ինձ թուաց, թէ հորիզոնի բոլոր անկիւններից վազում էին դէպի գետը բիւրաւոր մարդիկ, կանայք և երեխաներ, կանչելով իրանց կորածին, որոնելով նրանց դիակների կոյտերի մէջ։ Եւ վայնասուն ընկաւ աշխարհ, և կատաղի Կուրը յորդացաւ մարդկանց արտասուքով...

—

Կողքիս բժիշկ ընկերս աղէտի հէնց սկզբից էր այնտեղ և բախտ էր ունեցել մի քանիներին ուշքի բերել և տուն ուղարկել։

—Սրանից էլ յոյս չեմ կորում, ասաց ինձ. կէս ժամ է արդէն՝ ինչ արուեստական շնչառութիւն եմ անում, թերիս մէջ այլ ևս ոյժ չէ մնացել, այս տղերքն էլ հալից ընկել են, աւելացրեց նա ցոյց տալով երկու երիտասարդներ, որոնք հնալով, քրտնքկոխ չարունակում էին հարել ջրահեղձին... Տես ինչ հսկան է։

Ճշմարիտ որ, մի հսկայ էր փռված առաջիս. դէմքի առնական խոշոր գծերը, լայն կրծքի բարձր կամարը, գլանաձև թևերն ու ոտները զօրեղ ֆիզիկական ոյժի առհաւատչեաներ էին։ Եւ, դիտելով այս առոյգ երիտասարդ կազմուածքի յանկարծակի անշնչանալը, մարդ ափսոսանքի մի սուր կսկիծ էր զգում սրտի խոր-

սահմանում և թէ Ռուսաստանում վերադառնում են Էջմիածին, ուր գործում են գլխաւորապէս իբր ուսուցիչներ և մասամբ գրականական ասպարէզում, յուսալի է, որ այդտեղ ևս կը ստեղծվի Մխիթարեան միաբանութեան նման գիտնական միաբանութիւն։ Ահա այդ ժամանակ բարի նախանձից նրանք կը սկսեն գործել յօգուտ իրանց ազգի՝ ինչով կարելի կը լինի այդ անել։ Մեսրոպ վարդապետը ստանալով համալսարանական և մագիստրական նշաններ, իբրև առաջին օրինակ հոգևորականների մէջ, կունենայ անչուշտ իր բարերար ազդեցութիւնն իր ընկերակիցների մէջ, որոնց մէջ կը ծագի թէ բարի նախանձ և թէ ներելի փառասիրութիւն նմանվելու իրանց ընկերակցին։

Ահա մեր մէջ ենք գտնում այն զօրեղ խրթանը, որ իր հետ պիտի տանէ Էջմիածին մագիստրոս Մեսրոպ վարդապետը և նրա կրծքի երկու գիտական նշանները չատերի մէջ պիտի ծնեցնեն եռանդ և սաստիկ մեծ ձգտումն արժանալու այդ նշաններին, որը միայն կարող է լինել մեծ աշխատասիրութեամբ և բուռն սիրով դէպի գիտութիւնը։

Մեր ներկայ կեանքն ու պայմանները պահանջում են մի այնպիսի հոգևորականութիւն, որն իր հօտից մտաւորապէս և բարոյապէս բարձր լինի, որպէս զի կարողանայ հարկաւոր ազդեցութիւն ունենալ. ուստի ցանկալի է, որ հայր Մեսրոպի նման անձինք չատ և չատ լինեն մեր մէջ և նրանք բացի գիտնականութիւնից և բարձր զարգացումից՝ լինեն օժտված վայելչական ձիրքով և վարչական ընդունակութեամբ, որոնք այնքան կարևոր են նրանց հովուական ասպարէզում։

Հանդիսական

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յունվարի 5-ին

Անցեալ Յ-ին տեղիս հասարակական ժողովրանի դահլիճում տեղի ունեցաւ ուսանողների երեկոյթ՝ յօգուտ տեղական միջնակարգ դպրոցներից աւարտած չքաւոր ուսանողների։

Երեկոյթին տրված էր աւելի գրականական բնաւորութիւն ի պատիւ Նէկրասովի և Արծրունու յիշատակին։ Այդպէս ծրագրված, այդպէս յայտարարված և այդպէս էլ նախապատրաստված էր։ Նոյն-իսկ դահլիճի ճակատին՝ ներսի կողմից, աջ և ձախ ցոյց էին դրված նրանց՝ Նէկրասովի և Արծրունու մեծադիր լուսանկարները, իսկ չրջապատ կանաչների մէջ տեղ-տեղ՝ «Ն.» և «Ա.» յայտնի ազգանունների սկզբնատառերը։ Ժողովված էր ստուար մի բազմութիւն, աղատ տեղ չէր մնացել։ Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել. ուսանողների երեկոյթ, այն էլ մի այդպիսի գրաւիչ ծրագրով։

Այդ հետաքրքիր ծրագիրը, սակայն տարաբախտաբար, չիրագործվեց ամբողջովին. կարդացվեցին Նեկրասովի մի քանի ոտանաւորները միայն... և պարերի միջընթացքում ցոյց տրվեցին նոյն հեղինակի նկարագրութիւններից մի քանի կենդանի պատկերներ։

Ընթերցանութեան մէջ մասնակցում էին, ի միջի այլոց, քաղաքագլուխ Նօվիկով և «Бакинск. Извѣст.»-ի լրագրի խմբագրական անդամ Տոտոմեանց։

Պարերը աւելի քան աչխուժութիւն էին ներկայացնում և գլխաւոր շուք տուողները կազմում էին իրանք՝ ուսանողները։

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Դեկտեմբերի 25-ին

Դեկտեմբերի 21-ին Աստրախանի կանանց Բարեգործական ընկերութիւնը տուեց իր տարեկան երեկոյթը։

Ինչպէս ամեն տարի, այս տարի էլ չէին զլացել իրանց մասնակցութիւնը ցոյց տալու մեր քաղաքի չատ թէ քիչ աչքի ընկնող հայ սիրողները թէ նուագողներից, թէ երգեցողներից և թէ կարդացողներից։

Նախ քան մասնակցողների մասին խօսելս՝ մատնանիշ կանեմ մի ընդհանուր պակասութեան վրա, որը չատ աչքի էր ընկնում. դա ընդհանրապէս հայ ոգու բացակայութիւնն էր որ նկատւում էր թէ ծրագրի և թէ առհասարակ դահլիճի զարդարանքի մէջ։

Մենք յաճախ պատահում ենք «Մշակի» մէջ թղթակցութիւնների, ուր տեսնում ենք, որ հայ կինը, հայ երիտասարդը, հայ ուսանողը ոչինչ չեն խնայում երեկոյթին վայելուչ և, որ գլխաւորն է՝ հայ ձև տալու, որպէս զի ներկայ եղող հասարակութիւնը գոնէ մի բոպէ զգայ՝ որ ինքը գտնվում է մի այնպիսի տան մէջ, որտեղ ամեն ինչ հայութիւն է յիշեցնում նրան։

Ահա այդ բանը բացակայում էր Աստրախանի երեկոյթում։

Իսկ ծրագրի հայկական մասը այնքան աղքատ էր, որ եթէ դահլիճը չը լիներ լցված հայ հասարակութիւնով և եթէ մասնակցողների մեծ մասը հայեր չը լինէին՝ անծանօթ մի մարդ հազիւ թէ կարողանար հասկանալ, թէ դա հայ երեկոյթ է։

Գալով մասնակցողներին՝ պէտք է ասած, որ ամենից աչքի ընկնում էր պ. Ն. Մէդնիկեանի երկու սեռից կազմած քառաձայն խումբը իր կանոնաւորութեամբ և ներդաշնակութեամբ։ Բայց դժբախտաբար չատ քիչ երգեց, միայն երկու երգ՝ «Սիրուհիս, քեզ համար»... և «Ահա հրեշտակ» ժողովրդական երգերը և երկուսն էլ միաձայն ցանկութեամբ կրկնվեցան։ Շատ լաւ երգեց օր. Պաղովեան Բիզէի «Կարմէն» օպերայից մի արիա։ Օրիորդը մի քանի անգամ մասնակցել է երեկոյթներում և կոնցերտներում և ամեն անգամ յաջողութիւն է ունեցել. ցանկալի էր որ կատարելագործէր ձայնը։ Օր. օր. Աղամեան և Աստուրեան նուագեցին դաշնամուրի վրա Կոնսկու «Պոլոնէզը»։ Պ. Վրթ. Փափազեան կարդաց իր «Նամակներ իմ հայրենիքից» վերնագրով գրուածքը, որի նիւթը վերցրած է կոտորածներից և գրված է նամակների ձևով։ Կարդաց միայն երեք նամակ և վերջացրեց հետեւեալ խօսքերով. «մեռածները ողջունում են ձեզ, ապահովութեան մէջ ապրող բարեկամներից»։ Բայց չը զարմանաք, ընթերցող, եթէ ասեմ ձեզ, որ հանդիսականներից ոչ մէկը համարեա չէր լսում։ Մէկը նոյն-իսկ համարձակութիւն ունեցաւ դառնալ և կողքի նստածից ոուսերէն հարցնել. «ինչ լեզուով է կարդում, հայերէն թէ վրացերէն»։ Ահա դրանից կարող էք պարզ գաղափար կազմել, թէ ինչ դրութեան մէջ է հայոց լեզուն Աստրախանում։ Բաւական լաւ երգեց տ. Եւա Թելեթեանը Դեմբերգի «Ինդուսական երգը». տիկնոջ ձայնը թէև փոքրիկ, բայց չատ դուրեկան և ախորժելի է։

Յամենայն դէպս՝ շնորհակալութեան արժանի են տ. տ. Մելիքենցեան և Աննա Թելեթեան, իբրև երեկոյթի կառավարչուհիներ։ Ընդհանուր մուտք եղել է 1479 ր. որից 371 ր. ծախսը հանելով՝ զուտ արդիւնք մնացել է 1108 ր. մի գումար՝ որ ոչ մի տարի չէ ստացվել։

Հանդիսատես

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պետերբուրգ, դեկտեմբերի 27-ին

Նոյեմբերի 16-ին Պետերբուրգում տեղի ունեցած հայոց երեկոյթի գանձապահը հայ ուսանողութեան կողմից յայտնում է իր խորին շնորհակալութիւնը հեռանալ անձանց, որոնք ուղարկել էին իրանց նուէրները։

Թիֆլիս—պ.պ. Մ. Արամեանին 100 ր., Ա. Մանթաչեանին 25 ր., Ա. Մելիք-Ազարեանին 25 ր., Գ. Փուղինեանին 10 ր., Ե. Ծատուրեանին 20 ր., Բաքու—Ց. Ադամեանին 20 ր., Աստրախան—Գ. Էլդարեանին 25 ր., Ռոստով—Եղբ. Ունանեանցներին 5 ռուբլի։

Գարեգին Հալաճեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք հրատարակել էինք այն նուիրատուութիւնների մասին, որոնք արված էին տօների առիթով չքաւորներին օժանդակութիւն հասցնելու նպատակով։ Ստացված գումարները մենք բաժանեցինք Նոր-Տարու և Զրօրհնէքի թաթախման օրը կարօտեալներին։

—

Յունվարի 6-ին, երկուշաբթի, Թիֆլիսի հայ հոգևորականութիւնը, իր գլուխ ունենալով Թիֆլիսի առաջնորդ Սուրէնեան արքեպիսկոպոսին, սովորական հանդէսով կատարեց Զրօրհնէքի հանդէսը։ Զը նայելով, որ երեք օր անընդհատ տեղացող ձիւնից փողոցները ծածկված էին ձիւնախառն ցեխով, բայց և այնպէս ժողովուրդը սովորական բազմութեամբ լցրել էր հանդիսավայրը։ Հանդէսին, ի միջի այլոց, ներկայ էին Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար Շեստակով, ուպրավայի անդամներից Կօգչայեան և ուրիշները։

—

Թիֆլիսը իր ամբողջ չրջակայքով ձիւնի մէջ է։ Երեք օր անդադար ձիւն էր գալիս։ Քաղաքում ձիւնի մի մասը հալվեց, իսկ չրջակայքում նա նատել է հաստ չերտով, որ հասնում է տեղ-տեղ մինչև կէս արշինի։ Նահանգի մի քանի տեղերում ձիւնի պատճառով երթևեկութիւնը խանգարված է։

—

Մենք ստացանք Պլօցկի նահանգի Բրպինից մի անձից, որ իր անունը չէ ցանկանում յայտնել, տասը ռուբլի աղքատներին բաժանելու համար։

—

Մեզ ուղարկված է «Եւրոպայի հայ ուսանողական միութիւն» մի յայտարարութիւն, որից երևում է, որ դեկտեմբերի 19-ին, ուսանողական միութեան նախաձեռնութեամբ, Եւրոպայի զանազան հայաբնակ քաղաքներում կատարվելու էին յուշահանդէսներ Գրիգոր Արծրունու մահվան տասնամեակի առիթով։

—

Այսօր, հինգշաբթի, յունվարի 9-ին, դերասանուհի տիկին Սիրանոյշ, որ մի քանի օրից ի վեր Թիֆլիսումն է, առաջին անգամ բեմ դուրս կը գայ հայոց դրամատիական խմբի ներկայացման Դիւմայի «Կամելիաղարդ տիկին» պիեսի մէջ։ Տիկին Սիրանոյշ կը մասնակցէ և միւս ներկայացումներին։

—

Ինչպէս հեռագրում է Անդրկովկասեան երկաթուղիների կառավարչի օգնական Շայկեվիչ Թիֆլիս—Կարս երկաթուղային գծի Հա-

---

քերում, ափսոսանք մարդկային մի չքեղ կեանքի կորստեան առաջ, բնութեան հրաչքային մի ստեղծագործութեան աւերման առաջ։

—Ափսոս, դուրս թռաւ բերանիցս։

—Այս անիրաւը ինձ երկու անգամ խաբուսիկ յոյսեր է տուել.—մի քանի անգամ չունչ քաշեց, բայց դեռ յոյս չեմ կտրել, այս հսկաների մէջ կեանքը այդպէս չուտով չէ մարում։

Եւ կռանալով, նա չարունակեց հարել...

—Զարմանալի բան, չարունակում էր բժիշկը առանց աշխատանքը ընդհատելու... Երբ կեանքի նշոյլները այսպէս երեւում են ու մարում, մի տարօրինակ զգացմունք է զարթնում սրտումս. ինձ թւում է, թէ այդ մարդը դիտմամբ խաբում է ինձ, որ տանջէ ինձ, որ ծաղրէ գիտութիւնս ու ունայն դարձնէ այսքան աշխատանքս, և այն ժամանակ մի տեսակ վրէժխնդրութեան զգացմունք է բարձրանում իմ մէջ.—մի ուչքի գայ, ես գիտեմ!

Այս բոպէին մի բարձրահասակ տղամարդ արագ անցաւ առաջովս, հրելով ինձ, բայց հազիւ էր երկու քայլ արել, որ յանկարծ չուռ եկաւ, նայեց պառկած ջրահեղձին, «վայ Գիդո» գոռաց ու գնդակահար եղած գազանի նըման չոքեց ցեխի մէջ։

Դէմքի գծերը կնճռվեցին, խառնվեցին, աչքերը մի քանի անգամ բաց ու խուփ եղան, բայց երկաթէ ոյժը խեղդեց արտասուքը և այս գեղեցկադէմ մարդը թոյլ երեխայի աղերսանքով դիմեց բժշկին։

—Բժիշկ, դեռ յոյս կայ.

—Կայ, կայ, հոգիս հանեց, բայց... դէ, դու էլ օգնիր, մենք յոգնել ենք... երևի եղբայրդ է։

—Այո, պ. բժիշկ.

—Նման է...

Նոր-նոր դիակներ էին հանում ջրի միջից, մենք վազում էինք մէկից միւսին, լի փրկելու բուռն ցանկութեամբ և յուսահատված հեռանում անցնում ուրիշ դիակների։

Ցանկարծ մի անսովոր ճիչ ընկաւ ականջիս. «Գիդո ջան, Գիդո, այ էդէնց, ես քո հոգուն մեռնեմ, մէկ էլ չունչ քաշի, Աստուած սիրես, ես եմ, ես, տեսնում ես, Գիդո ջան, Գիդո!

Ջրահեղձի եղբայրն էր նա։

Ես չուռ եկայ, ընկեր բժշկի երեսին ժըպիտ երևաց.

—Պրծաւ, պրծաւ, հիմի չունչ է քաշում, ասեց նա... Դէ ծածկէք ու ոտներն ու ձեռները տրորէք, դարձաւ նա դէպի խեղդվածի եղբայրը։

Ասեց ու առանց յետ նայելու անցաւ ուրիշ խեղդվածներին փրկելու։

Ես աքանչացած նայում էի այս իսկական բժշկին, իսկական մարդուն, որը իր անընկճելի տոկունութեամբ ու ահագին հմտութեամբ մարդու կեանք էր փրկում, առանց մինչև անգամ իր փրկածի ով լինելն իմանալ ցանկանալու...

—

Դիակների որսը դադարել էր։ Զմեռվան դալուկ պաղ արևը մի բոպէով պսպղեցրեց կըտուրների ու սարերի ձիւնը, խաղաց դիակների մերկութեան վրա և կարծես, տեսածից զարհուրած, նորից մտաւ ամպի ետևը։

Ամբոխի շղթան քանի գնում սեղմվում էր, ոստիկանները հազիւ էին կարողանում կանգնեցնել առաջ հրվող մարդկային պարիսպը, ահից ու զարշանդից կապված լեզուները բացվեցին, սեղմված կրծքերը լայնացան ու անորոշ, անհասկանալի աղաղակները ալիքների նման անցան ամբոխի միջով։ Դիակների չարտները այժմ կտրատվում էին տեղ-տեղ։ Դիակները մի կերպ փաթաթված տարվում էին մեր առաջով, և մենք չոր աչքով, մի տեսակ ապշած անտարբերութեան մէջ, դիտում էինք այս մռայլ յուղարկաւորութիւնները...

—Պարոն բժիշկ, ներողութիւն, պարոն բժիշկ, աղաչում եմ...

Ես սթափվեցի, առաջիս կանգնած էր մի երիտասարդ թիւրքահայ կին։

—Պարոն բժիշկ, ներող եղէք, աղաչում եմ, ես չեմ գիտեր, խղճացէք, գաղթական եմ... մանչս չէք տեսէր։ Սանկ մանչ է, քրդերէն փախած ենք, ճար չունի, Ներսիսեան դպրոցը կը սովրի, ներեցէք։

—Գնա, ռադ էլի, մի խանգարի, գոռաց վրան փրկողներից մէկը, որը աշխատում էր մի նոր հանած ջրահեղձի ուչքի բերել։

Կինը քիչ յետ քաշվեց, բայց կրկին կանգ առաւ դէմքն աղերսագին, ձեռները հայցող, աչքերը որոնող։

—Ներողամիտ եղէք, մանչս կը որոնեմ... Սանկ հասակ ունէր, 11 տարեկան էր, կարմիր ալ վզկապ ունէր ու կարճ դեղին փալթօն, ըսի մի էթար, դէ տղայ է, ականջ չըրաւ։

—Երևի տուն է վերադարձել, տիկին, ասեցի ես. մի վրդովվէք, տեսնում էք բոլորը հասակաւոր տղամարդիկ են, ձեր տղան Աստծով ողջ առողջ տանն է։

Կնոջ սփրթնած շրթունքների վրա մի թոյլ ժպիտ նկարվեց։

—Հա, այդպէս է, շնորհակալ եմ, հա ես ալ կըսեմ, անանկ չէ մի, որ փոքրեր չը կայինն. հա, ի հարկէ տանը պիտի ըլլայ. չատ շնորհակալ եմ, ներողութիւն, պարոն բժիշկ, կը խանգարեմ. շնորհակալ եմ, ի հարկէ, հոս չէ, երթամ։

Ասաց ու անսպասելի կերպով ձեռս բռնեց, համբուրեց ու արագ քայլերով հեռացաւ. բայց հազիւ էր մի տաս քայլ արել, երբ կանգ առաւ, յետ վազեց դէպի գետի ափը, մի փոքր տարածութիւն էլ ափի աւազի վրայով անցաւ, չոռած աչքերը պտտեց իր շուրջը և նորից վախվխելով մօտեցաւ մեզ։

—Աստուած ձեզ բարի տայ, պարոններ,—Աստուած ձեր որդիքը պահէ.—չատ շնորհակալ եմ, համբուրեցրիք ինձ. մանչս խեղդված չէ, ի հարկէ, տանը կըլլայ... կերթամ... Ցտեսութիւն, շնորհակալ եմ... ի հարկէ, ի հարկէ։

—Հա, բան մ՚ալ կուզեմ հարցնել, ձանձրութիւն չըլլայ ձեզ, աւելացրեց նա չտապով... չատ խեղդվածներ հանած էք, անպէս չէ, ալ չը կայ ջրին մէջ...

—Հերիք է զահլայ տանես, է, գոռաց նոյն մարդը։ Դէ, գնա, ասում են քեզ, տղէդ այստեղ չէ, էլ ինչ ես կանգնել...

—Այո, իրաւունք ունէք... բայց, դէ գիտէք, մայր եմ, ադ մէկ մանչն է մնացեր... Ադ ալ որ, Աստուած չանէ... արեց խեղճ կինը ու խրվեց ամբոխի մէջ։

—

Անցաւ մի քանի բոպէ ևս, կղզեակը մաքրվում էր դիակներից ու ժողովուրդը քաշվում էր տները։ Բժիշկներն էին միայն, որ դեռ կանգնած էին մնացել իրանց տեղերում, թևերը թուլացած, դէմքերը մռայլված ու յուսահատ։ Մնացել էին կանգնած աղէտի տեղում, թէև լաւ զգում էին իրանց ներկայութեան անօգուտութիւնը և սոսկումի դէմ կուելու անկարողութիւնը...

Վերջապէս «գնանք», ասեց իմ ընկեր բըժիշկը։ Կղզին խոլվաթացել էր արդէն, հեռացող մարդկային խմբերը նօսրացել էին, ճանապարհն ազատ էր։

—Գնանք, ուչ է, համաձայնեցի ես, և երկու ընկերներս թև թևի տուած, յոգնած քայլերով անցանք ջրափի աւազի վրայով, դիմելով առաջնորդարան։

Բայց հազիւ էինք մի քանի քայլ արել, երբ լսեցինք նորից «պարոն բժիշկ, պարոն բժիշկ»։

Շուռ եկանք։

Լողուորներից մէկը մեր առաջ բերեց թևերի վրա մի տղայի դիակ ու պառկեցրեց գետին մեր ոտների տակ։

Ես նայեցի։ Մի ինչ-որ ծանր բան մի քանի անգամ թնդաց ներսս և ուժով սեղմեց կոկորդս...

Տղան հագած ունէր մի դեղին կարճ վերարկու, իսկ վզին փաթաթած էր կարմիր բրդէ վզնոց...

Վ. Արծրունի

մամլի կայարանից՝ մարդատար և ապրանքակիր գնացքների երթևեկութիւնը Համամլի—Ալէքսանդրօպոլ կայարանների միջև, ձիւնախառն փոթորկի պատճառով, դադարեցրած է է, և առ այժմ չէ կարելի որոշել, թէ երբ կը վերականգնվի երթևեկութիւնը, որովհետև դեռ ևս շարունակվում է փոթորիկը։

—

Յունվարի 3-ից Թիֆլիսում տեղի են ունենում Թիֆլիսի նահանգի ուսական հոգևոր ուսումնարանների վերատեսուչների համաժողովի նիստերը՝ նախագահութեամբ Թիֆլիսի հոգևոր սեմինարիայի ռեկտորի։ Համաժողովը, ի միջի այլոց, որոշել է միջնորդութիւն յարուցանել՝ վերացնելու յունարէն լեզուի դասաւանդութիւնը հոգևոր ուսումնարաններից։

—

Մեզ ինդրում են տպագրել հետևեալը. «Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլուխը յայտնում է նահանգի ազնուականներին, որ Թիֆլիսի նահանգի ազնուականութեան հերթական ժողովը տեղի կունենայ 1903 թուականի մայիսի 2-ին։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Անմահ Արծրունու մահարձանի բացման լուրը յիշեցրեց ամեն տեղ ապրող հայերին նրա փառաւոր գործունէութիւնը և այն ամենը, ինչ հայերս պարտական ենք նրան։ Սրտանց բարեմաղթում եմ խմբագրութեանդ անդամներին կորով ու աջողութիւն հանդուցեալի սկսածը իբրև սրբազան աւանդ առաջ տանելու։ Այդ օրը մայրաքաղաքիս ծխականներն էլ յարգեցին հանդուցեալի յիշատակը հոգեհանգիստ կատարելով»։

—

ԱՍԻԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 27-ին տեղի ունեցաւ «Մանկական պարտէզի» տօնածառը, որ իսկապէս կրում էր և մանկական պարահանդէսի բնաւորութիւն։ Տօնածառի ծրագիրը միակողմանի չէր, սակայն վերին աստիճանի անձեռնհաս անձերից կազմած, որով և շատ խառն ու անբովանդակ անցաւ երեկոն։ Տ. Մարիկոնեանի աշակերտուհիները խաղացին «Ղոնաղլուղս մնաց» վոդէվիլը, սակայն հէնց ներկայացման ժամանակ հանդիսականներից շատերը զբօսնում ու խօսում էին, ուստի և ոչինչ չը լսվեց։ Խրախուսանքի արժանի էր մանկական պարտէզի վարժուհի օր. Հ. Խաղիեան, որ եռանդուն աջակցութիւն էր ցոյց տուել՝ տօնածառը գլուխ բերելու համար»։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են. «Տեղիս երկրորդ ժողովարանի դահլիճում, դեկտեմբերի 25-ին, նախկին տարիների նման, կայացաւ հայոց ուսումնարանի տղայոց տօնածառը։ Եկած էր բաւական հասարակութիւն, որը ներկայացնում էր կատարեալ մի ժիսոր։ Աշակերտներն և աշակերտուհիները թէ հայերէն և թէ ռուսերէն կարդացին և երգեցին։ Ժամը 10-ին աշակերտներն և աշակերտուհիները ստացան իրանց նուէրները և ցրվեցին տները, իսկ տասից յետոյ սկսվեցին եւրոպական պարերը։ Հասարակութեան մի մասը, այն է «դուրսեցիները», սպասում էին ասիական պարերի, բայց այդ տեղի չունեցաւ. այնպէս որ «դուրսեցիները» անբաւական հեռացան։

—

ԱՍԻԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Ասիաբադը սկսում է լուսաւորվել էլեկտրականութեամբ։ Տեղական «Закаспійское Обозрѣніе» թերթի խմբագիր պ. Ֆէօդորովն է այդ գործին ձեռնարկողը և արդէն քաղաքի կենտրոնական մասում սիւներ է կանգնեցնում՝ յունվարից լուսաւորութիւնը սկսելու նպատակով։ Տեղական հայ վաճառականների մի խումբ նոր են մտադրվել կազմելու մի ընկերութիւն՝ նոյնպէս էլեկտրական լոյս մատակարարելու նպատակով, սակայն կասկածելի է՝ կունենան արդեօք դրանք ոյժ՝ մրցելու խմբագիր Ֆէօդորովի արդէն լաւ հիմքերի վրա դրած ձեռնարկութեան հետ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պարիզում հրատարակվող մի թերթի մէջ կարդում ենք. «Պ. Լեոն Մէյէ, որ հայ լեզուի ամբիոնի յաջորդն է Կարրիէրի մահից յետոյ, բացեց իր դասընթացը դեկտեմբերի 22-ին։ Գիտնական մեթոդներին հնազանդ մի լեզուագէտ լինելով, Մէյէ իրան պարտաւոր չէ համարում անտարբերութիւն ցոյց տալ այնտեղ, ուր խօսքը զուտ գիտութեան մասին չէ. նա միշտ համակրութիւն է արտայայտել հայ ազգին։ Բացման դասախօսութեան մէջ, նա յիշեցրեց հայ լեզուի ամբիոնի պատմութիւնը, սկսած Զրպետից, 1812-ից. ապա նա գովասանեց իր նախորդին, Կարրիէրին, իբրև պրոֆէսօրի և իբրև գիտնականի և յայտնեց, որ կաշխատէ խիստ կերպով ընթանալ հաստատուն նրա քննադատական ուղղութեան։ Հայոց լեզուի ուսումը, ասաց նա, պէտք է նոր բնաւորութիւն ստանայ։ Հին հայերէնի ուսման պէտք է կցվի արդի հայերէնի ուսումը. այդ նորամուծութիւնը պահանջվում է գործնական և գիտնական կարիքների պատճառով, որովհետև աշխարհաբար հայերէնը այն լեզուն է, որով խօսում է այսօր հայ ժողովուրդը։ Սակայն գրաբարի ուսումը չը պէտք է անհետանայ այդ պատճառով, որովհետև ներկան կարելի է բացատրել միայն պատմական նախորդների օգնութեամբ և մասնաւորապէս հայերէնի վերաբերմամբ. նա անընդհատ շարունակութիւն է իրողութիւնների թէ եկեղեցու և թէ լեզուի մէջ, այն երկու հաստատութիւնների մէջ, որոնց շնորհիւ ազգը պահպանել է իր ինքնուրոյնութիւնը՝ քաղաքական անկախութիւնը կորցնելուց յետոյ։ Ապա պ. Մէյէն ցոյց տուեց այն ուսումնասիրութիւնները, որոնք պէտք է կատարվեն հայ եկեղեցու, լեզուի, գրականութեան, ընագիրների, ընտանիքի և սեփականութեան վերաբերեալ հատատութիւնների մասին, ինչպէս և պատմութեան մասին, նա մատնացոյց արեց այդ առարկաներից ամեն մէկին վերաբերեալ նոր աշխատութիւնների վրա և յայտնեց, թէ որքան հետաքրքիր է հայերէնի ուսումը Փոքր-Ասիայի և Կովկասի ուսումնասիրութեան համար։ Նա վերջացրեց դասախօսութիւնը, ասելով, որ մարդկային հասարակութիւնների ուսումնասիրութեամբ զբաղվող բանասէրները բազմաթիւ նիւթեր կը գտնեն հայ լեզուագիտութեան մէջ»։

—Մեզ հաղորդում են, որ այս յունվար ամսին կայանալու է Պարիզում մի մեծ միտինգ մասնակցութեամբ ականաւոր հայասէրների, իսկ Բրիւսէլում, Լիսբոնում, Ժընեվում, Բերլինում և Միլանում կայանալու են դասախօսութիւններ հայոց հարցի մասին։ Դասախօսելու են Պրէսանսէ, Պիէր Քիյար, հռչակաւոր Բրանդէս և դօքտոր Բօհրբախ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

4 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հանդիսաւոր ճաշին Զմերային պալատում յունվարի 3-ին Թագաւոր Կայսրը բարեհաճեց արտասանել հետևեալ տօստը. «Երջանիկ լինելով տեսնել ձեր բարձրութեանը մեր մէջ եւ յայտնելով ձեզ շնորհակալութիւն ձեր սիրալիր այցելութեան համար, ես խմում եմ ձեր օգոստափառ ծնողների, նոցա կայսերական մեծութիւններ կայսրի եւ կայսրուհու եւ ձեր կայսերական՝ու արքայական բարձրութեան կենացը»։ Դրան գերմանական պրինցը պատասխանեց. «Մորին կերպով զգածված սիրալիր խօսքերից, որոնցով Ձերդ Մեծութիւնը բարեհաճեցիք դիմել ինձ, ես թոյլատրութիւն եմ խնդրում յայտնելու Ձեր Մեծութեանը, Նորին Մեծութիւն Կայսրի և Թագաւորի, իմ հօր անունից և իմ անունից, բուռն երախտագիտութեան ինձ արած սրտագին ընդունելութեան համար, որի մասին ես անջնջելի յիշատակ կը պահեմ։ Ես բարձրացնում եմ բաժակ Ձեր Մեծութեան, Նոցա Մեծութիւններ Թագուհի Կայսրուհիներ Մարիա Ֆէօդորովնայի և Ալէքսանդր Ֆէօդորովնայի և ամբողջ Կայսերական տան կենացը»։

Կ. ՊՕԼԻՍ։ Ամբողջ մամուլը ուրախութեամբ ողջունում է Ֆէրիդ-փաշային մեծ-վեզիր նշանակելը և մեծ յոյսեր է դնում նրա վրա. նոյնպէս է վերաբերվում այդ բանին և թիւրքաց քրիստոնեայ ազգաբնակութիւնը։

5 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գերմանական թագաժառանգը գնաց տեսնելու Զմերային պալատը, Էրմիտաժը և պատմական զգեստների ցուցահանդէսը։

ԳԱԳՐԻ։ Գագրիի կլիմայական կայարանի բացումը և հին եկեղեցու օծումը տեղի կունենայ յունվարի 9-ին։

ԺԸՆԵՎ։ Սակսօնական թագաժառանգուհին և Ժիրօն միասին Ժընէվից ճանապարհ ընկան յայտնի չէ թէ ուր։

ՎԻԵՆՆԱ։ Զէխական արմատականների օրստրուկցիայի պատճառով, ըէյխսրատի առաջին նիստը չարունակվեց 54 ժամ։

Կ. ՊՕԼԻՍ։ Սայիդ-փաշայի հրաժարականի պատճառն այն էր, որ նա ուզում էր զօրքը և պաշտօնեաների թիւը կրճատել։ Ֆէրիդ-փաշան հրամանագրեց չտապեցնել ըէֆօրմների մրտցնելը։

6 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունվարի 4-ին գերմանական թագաժառանգը ճաշեց Մեծ-Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչի պալատում, յունվարի 5-ին նա լութերական ս. Պետրոս եկեղեցումն էր. նախաճաշեց Նոցա Մեծութիւնների մօտ, այցելեց Ալէքսանդր III-ի թանգարանը և գերմանական դեսպանութեան մէջ ընդունեց գերմանական հպատակներին։—Յունվարի 5-ին տեղի ունեցաւ ֆրանսական դեղարուեստական ցուցահանդէսի բացումը։

ԽԱՐԿՕՎ։ Լիբաւային կայարանում Խարկովից ուղարկվեց մի կասկածելի զամբիւղ. բանալով զամբիւղը՝ մէջը գտան մի անյայտ անձի դիակ. ուղարկողը, կվիտանցիայով գալով, կալանաւորվեց. յայտնվեց, որ դա տաժանակիր աշխատանքներից փախած մէկն է։

Կ. ՊՕԼԻՍ։ Փչում է ձիւնախառն փոթորիկ. շատ դժբախտութիւններ կան ծովի և ցամաքի վրա։ Հաղորդակցութիւնը բոլոր ուղղութիւններով ընդհատված է։

ՄԷՆՏՕՆԱ։ Սաքսօնական կրօնպրինցուհին և Ժիրօնը ժամանեցին։

ԳԻԲՐԱԼՏԱՐ։ Հիւսիսային-գերմանական Լլոյդի «Վան» շոգենաւը Տունարի մօտ խրվեց ծանծաղուտի մէջ։ Նրա վրա 1500 ճանապարհորդներ կան։ Օգնութեան եկաւ ազատող շոգենաւը, բայց շոգենաւը ծանծաղուտից հանելու ջանքերը ապարդիւն անցան։

ՕԴԷՍԱ։ «Вѣд. Одесск. Градоначальника» լրագրում տպված է. «Յունվարի 2-ին Օդէսայի բանտում, տղամարդկանց բաժանմունքում, անկարգութիւններ սկսվեցին և յորդորները չօգնեցին։ Բանտային պահապան զինուորները ըէվոլվէրներ արձակեցին. մէկ կալանաւոր սպանվեց և մէկը վիրաւորվեց։ Կանչվեցին զինուորների երկու վաշտեր։ Կարգը վերականգնվեց։ Յունվարի 3-ին անկարգութիւններ տեղի ունեցան բանտի կանանց բաժանմունքում. կանչված զինուորները երկու անգամ ըէվոլվէր արձակեցին. կալանաւոր կանանցից մէկը սպանվեց։ Կարգը վերականգնվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունվարի 6-ին տեղի ունեցաւ մկրտութեան հանդէսը Բարձրագոյն ներկայութեամբ և գերմանական թագաժառանգի ներկայութեամբ։

Յունվարի 6-ին գերմանական թագաժառանգը մասնակցեց Թագաւոր Կայսրին գերմանական կայսրի ընծան—վերջին զրահակիր նաւի մոդէլը։

7 յունվարի

ՊԱՐԻԶ։ Մեռաւ «Times» լրագրի թղթակից Բլօվից։

ՊԷԿԻՆ։ Հանդիսաւոր կերպով բացվեց այն արձանը, որ կառուցեց չինական կառավարութիւնը բարօն Կետտելէրի համար։

Կ. ՊՕԼԻՍ։ Մեծաքանակ ձիւնի պատճառով, հաղորդակցութիւնը մերձակայ շրջակաների հետ և հէնց քաղաքի մէջ կառքերով և ձիերով անհնար է։ Վերջին պօստը ստացված է յունվարի 4-ին, և այդ ժամանակից պօստային յարաբերութիւնները դադարած են։

ՁԱՐԶՈՑ։ Ամուրարեան նաւատորմի «Կայսր Նիկոլայ II» շոգենաւը քարերին դիպչելով՝ ջարդվեց Կէլիֆի մօտ։ Հրամանատարը և 112 ճանապարհորդներ փրկվեցին։

Կ. ՊՕԼԻՍ։ Պատարագի ժամանակ Գուսֆատիուում դեղատան մի հայ աշակերտ մի քանի անգամ ըէվոլվէր արձակեց հայոց պատրիարք Օրմանեանի վրա և վիրաւորեց նրա աջուը։ Վէրքը, ըստ երևոյթին, վտանգաւոր չէ։ Զարագործը, որ ըստ երևոյթին հայ կոմիտէտին է պատկանում, կալանաւորված է։

7 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թէթև մրսելու պատճառով գերմանական թագաժառանգը յետաձգեց իր ճանապարհորդութիւնը դէպի Նովգորոդ։

ՍՕՖԻ։ Երկրագործութեան մինիստրը գնում է Գագրի կլիմայական կայարանի բացմանը։—Այսօր բացվում է քաղաքային դպրոցը։

Կ. ՊՕԼԻՍ։ Արևելեան երկաթուղով երթևեկութիւնը Զիտալոլոյի և Խաղէմ-Կեօէմի միջև ընդհատված է ձիւնի պատճառով։

ՄԱԴՐԻՏ։ Անտուժարում անկարգութիւններ տեղի ունեցան քաղաքային հարկերը բարձրացնելու պատճառով։ Ազդաբնակութիւնը քարեր էր գցում հրացան արձակող ժանդարմների վրա։ Մի քանի մարդիկ վիրաւորված են։

ՏԱՆԺԷՐ։ Սուլթանական զօրքերը ջարդեցին թեկնածուի կողմնակիցներին։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւոր Բիվէ մտադրութիւն ունէր հարցապնդում անել Մակեդոնիայում տեղի ունեցող անցքերի առիթով և Ֆրանսիայի վերաբերմունքի մասին դէպի այդ անցքերը։ Դէլկասէ յայտնեց, թէ կարող է միայն պատասխանել Բիվէին, որ Ֆրանսիան ցոյց տուեց իրան արժանաւոր իր աւանդութիւններին, աւելացնելով, որ արտաքին գործերի մինիստրութեան բիւդժէտի քննութեան ժամանակ կը տայ բոլոր ցանկալի բացատրութիւնները։ Բիվէ հրաժարվեց հարցապնդումից։

8 յունվարի

ՍՕՖԻԱ։ Յատուկ մասնաժողովը ընտրեց Բանակի հրապարակը, որտեղ պէտք է կառուցվի տաճար-յուշարձան Պլեվնայում ընկած ռուս զինուորների համար։

ՏԱՆԺԷՐ։ Ֆէցի մօտ տեղի ունեցած կռուի նշանակութիւնը չափազանցրած է. սուլթանի զօրքերը կողոպտեցին արևմտեան խիայնները՝ մի քանի գիւղեր, բայց Թեկնածուի զօրքերի հետ դեռ գործ չեն ունեցել։

ՊԱՐԻԶ։ Մինիստրների խորհրդում Լուբէ ստորագրեց օրինագիծը՝ Բրէստոնի կարօտեալ ձկնորսներին արտակարգ նպաստ տալու 500,000 ֆրանկ։ Արտաքին գործերի մինիստրը յայտնեց, թէ մակեդոնական հարցում Ֆրանսիայի քաղաքականութիւնը ուղղված է մակեդոնական ժողովրդի դրութիւնը բարւոքելու՝ բոլորովին որոշ ըէֆորմների միջոցով։

Կ. ՊՕԼԻՍ։ Ծովային մինիստրութիւնը և Կրուպպի ներկայացուցիչը ստորագրեցին պայմանագիր՝ «Ասսարի-Թէվֆիկ» զինուորական նաւը նորոգելու և զինաւորելու մասին, միաժամանակ պատուիրելով երկու ականակիր յածանաւ։ Հաստատվում է, որ Օրմանեան պատրիարքի վէրքը այնքան անչնչն էր, որ նա կարողացաւ եկեղեցական ժամերգութիւնը չարունակել։

ԿԱՐԱԿԱՍ։ Կառաջի յայտարարած 2,500,000 բօլիվարի փոխառութեանը ամբողջապէս ստորագրվեցին օտարազգի և վենէցուէլացի վաճառականներ. այս բանը նկատում են իբրև ապացոյց, թէ Մադօսի ղեկավարած ապստամբութիւնը պէտք է համարվի անաջողութեան մատնված։

ԲՐԻՄԷՆ։ Գիբրալտար հասաւ ծանծաղուտից հանված «Վան» շոգենաւը։

ՊԷԿԻՆ։ Պետութիւնների վերջին յայտագրին Զինաստանը պատասխանեց, թէ բոլորովին զրկված է հնարաւորութիւնից՝ պետութիւնների պահանջած վճարումներն անելու, և մատնացոյց է լինում փոխարքաներից հեռագիրներով ստացված տեղեկութիւնների վրա, թէ հարկերը բարձրացնելով չէ կարելի աւելի փող հաւաքել, որովհետև երկիրը աղքատացել է։ Զինաստանը նորից միջնորդում է, որ մաքսային հարկը ստացվի ոսկով, սահմանելով ամեն ամիս միջին կուրս, որով պէտք է վճարվի մաքսահարկը։

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ։ Կովկասեան հանքային ջրերի 1902 թ. հաշուից երևում է, որ այցելուների թիւն եղել է 35,000, ծախված է 6,000,000 չիշ ջուր. ընդհանուր մուտքն է 850,000 ր.։ 1898-ին այցելուների թիւն եղել է 10,000, ծախված է եղել 500,000 չիշ և ընդհանուր մուտքը հասել է 240,000 բուբլու։

ԿԻԵՎ։ Նահանգական բանտի եկեղեցում ժամերգութեան ժամանակ կալանաւորների մէջ վէճ բացվեց, որ փոխվեց կռուի. երեք կալանաւոր վիրաւորված են։ Պահապանները և վերակացուն կարգը վերականգնեցին։

ԼՕՆԴՈՆ։ Իօնի արդյունաբերական գործարանում փորձվեց Ֆրուսկինի գործիքը, որով երկաթից հեռացնվում են ծծումբը և ֆոսֆորը առանց կիր խառնելու, որի պատճառով էժանանում է հալելը և կրճատվում է կռելու գործողութիւնը։ Գործիքը ներգործում է առանց վառելափայտի և փուքսի։ Փորձը մասնագէտների ներկայութեամբ շատ աջող դուրս եկաւ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վներական (սիֆիլիս) և միղաւոր. հիանդ.
ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Դ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՄՈՒԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. և մորթու հ. (էլեկտրաբուժ.)։
Ն. Ս. ԼԻՒԻՆՑԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբոյժ) ներքին և վներական հ.
ԿԻՆ-ԲԻՒՇԵՆԱՆ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի

(կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին
Օ. Ց. ՌՌՎԱՆԻՑԱԿԻ—տանը. Ծաղկանոց ջե բժշկական մարմնամարզ. գիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԳՈՒՏՏԷՆԲԵՐԳ

գ ր ա խ ա ն ո ւ թ ի ւ մ

ՊԱՏՐԱՍՏՎԱԾ է տօների առիթով փառակազմ

Ն Ո Ւ Ե Ր Տ Ա Լ Ո Ւ

«Հայկական տպագրութիւն», երկու հատոր, Լէօի 3 ր. 50 կ.
«Խեղճերը», Ահարոնեանի 1 ր. 75 կ.
«Ջնուդ Քուչան», Շահրիարի 1 ր. 75 կոպ.
«Պոմպէյի վերջին օրերը», լօրդ Լիտտօնի 2 ր.
«Վտակ» ժողովածու 2 ր.
«Վէրք Հայաստանի», Խ. Աբովեանի 1 ր. 75 կ.
«Ստեփաննոս Նազարեան», Լէօի, I և II հ. 2 ր.
«Ցարութիւն», Տօլստօյի 2 ր.
«Ֆրոմոն Կրտսեր», Դօդէի 1 ր. 50 կ.
«Կովկասի հայք», Երիցեանի 5 ր.
«Հայոց պատմութիւն», Պալասանեանի 2 ր.
«Քաօս», Շիրվանզադէի 2 ր.
«Նամուս», Շիրվանզադէի 1 ր. 50 կ.
«Ցարութիւն և Մանուէլ», Աղայեանի 1 ր.
«Բանաստեղծութիւններ» » 2 ր.
«Ցո՛ երթաս», Սենկևիչի 2 ր.
«Մարդեմ» Եբերսի 1 ր. 50 կ.
«Էվէլինա» Գրիգոր Արծրունու» 1 ր.
«Աչոտ երկաթ», Այվազեանի 1 ր. 50 կ.
«Հիւսիսի Արծիւը», » 1 ր. 50 կ.
«Ազգային ջոջեր», Պարոնեանի 1 ր. 50 կ.
«Հոսհոսի ձեռատետրը», » 1 ր. 50 կ.
«Ընտիր Հայկազունք», պատկերներով 3 ր.

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ", Лорисъ-Меликовская ул.; № 11. Г. Галустяну. 3—3

Արգելում ենք այսուհետև առանց մեր թոյլտուութեան ներկայացնել ամուսնուս թարգմանած ու փոխադրած թէ տպած և թէ անտիպ պիեսները ինչպէս՝ «Քոյր և եղբայր», «Փաստաբանի հօտ», «Ծարահատեալ դերասան», «Ամօթ ձեր ազգութեան», «Ցակովբեաններ» և այլն:

Խնդրում ենք բոլոր այն անձանց, որոնց մօտ գտնվում են ամուսնուս փոխադրած ու թարգմանած ցենզուրական պիեսները վերադարձնել: Պայմանների մասին դիմել մեզ՝ Ѳоминая ул. д. Навасартовой № 21 Тагуи Теръ-Давтьянъ, կամ Ներս. դպրոց Բագրատ Տէր-Ղազարեանցին:

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ЕЖЕДНЕВНУЮ (не исключая понедѣльниковъ) **ГАЗЕТУ** политической и общественной жизни и литературы

Бакинскія Извѣстія

Программа газеты: Дѣйствія и распоряженія Правительства: Телеграммы: Общія статьи по разнымъ вопросамъ; Хроника мѣстная, общая и иностранная; Корреспонденціи; Обзоръ печати; Фельетоны; Судебный отдѣлъ; Нефтяное и горное дѣло; Смѣсь; Справочный указатель.

Подписная цѣна: съ доставкою въ Баку и пересылкою въ другіе города на годъ 7 р., на 6 мѣсяцевъ 4 р., на 3 мѣсяца 2 р. и на одинъ мѣсяцъ 1 руб. Подписчики на 1903 г. получаютъ газету въ 1902 г. со дня подписки безплатно.

Такса за объявленія: За строку петита или мѣсто занимаемое ею впереди текста—10 к., а позади текста—7 к. Многократныя объявленія по соглашенію.

Редакція и контора: Баку, пассажъ Шагиданова.

Редакторъ-издатель
Н. Л. ГРИНЕВЪ.

Լոյս տեսաւ

ԳՐԻԳՈՐ ՋԱՆՇԵԱՆ

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ:

Հանգուցեալի պատկերով: Գ. քահ. Մկրտումեանի: Գինը 35 կ.: Դիմել—Գուտտէնբէրգ և Կենտրոնական գրավաճառանոցներին: 5—5

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

ԳՐ. ԻՎ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

ներքին և երեխաների հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 10-ից մինչև 11-ը և 5-ից մինչև 7 ժամ երեկոյեան: Միխայլովսկի պրօսպէկտ 154: Տէլէֆօն 825: 13—30

ՏԱՐԱԶ

Գեղարուեստական, գրական, գիտական, քննադատական պատկերազարդ շաբաթաթերթը 1903 թ. հրատարակվելու է ՃՈԽ և ԸՆԴԱՐՁԱԿ ԾՐԱԳՐՈՎ: „Տարազի" նպատակը, ուղղութիւնն ու ձգտումը հայերի մէջ—տարածել ուղիղ հայեացք դէպի գ ե ղ ե ց ի կ ը, բ ա ր ի ն և օ գ տ ա կ ա ր ը: Գեղարուեստը, գրականութիւնը, գիտութիւնը՝ դատարակութիւնն ու քննադատութիւնը կազմում են „Տարազի" հիմքը: Երկրորդական, լրագրական բաժանմունքները.—յօդուածներ, թղթակցութիւն, հետաքրքիր տեղեկութիւններ, կենսագրական, ճանապարհորդական, նորութիւններ, ծրագիրներ, խորհրդակցութիւն, այլ և այլք և այլն: „Տարազը" դարձնում են անհրաժեշտ թերթ ժողովրդի բոլոր խաւերի համար: Իսկ զուարճալիք, տնային տնտեսութիւն, կար, ձև, ձեռագործ, երաժշտութիւն և այլն աւելի են մատչելի անում „Տարազը" ամեն ընտանիքի համար: „Տարազի" տարեկան գինը 6 ր., արտասահման 10 ր.: ՊՐԷՄԻԱՆ՝ մի հոյակապ մեծադիր պատկեր ԱՆԻԻ աւերակներից—ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ստանում են միմիայն նրանք, որոնք բաժանորդ են „Աղբիւր-Տարազին" և վճարել են 10 ր.: Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція журнала ТАРАЗЪ, կամ (Tiflis—Caucase) Rédaction de la Revue TARAZ.

Թիֆլիսում կարելի է բաժանորդ գրվել և Բ ո ւ ն ի ա թ - օ ղ լ ո ւ ծխախոտի վաճառանոցում Ա ր տ ի ս տ ա կ ա ն ը ն կ ե ր ո ւ թ ե ա ն թ ա տ ր ո ն ի տ ա կ:

Խմբագիր-հրատարակիչ՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, յունվարի 11-ին, նշանակված է

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ

սովորական կարգով: 1—3

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Հինգշաբթի, յունվարի 9-ին

Հայոց դրամատիկական ընկերութեան խումբը մասնակցութեամբ

Տ. Ս Ի Ր Ա Ն Ո Յ Շ Ի

կը ներկայացնէ

ԿԱՄԵԼԻԱԶԱՐԴ ՏԻԿԻՆ

Դրամա 5 գործողութեամբ Ալ. Դիւմա-որդու:

Մասնակցում է ամբողջ խումբը:

Սկիզբն է 8 ժամին

Տոմսակները կարելի է ստանալ կասսայում: 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Չորեքշաբթի, յունվարի 15-ին, նշանակված է ընդհանուր ժողով, որի ժամանակ պէտք է ընտրվեն ժողովարանի աւագներ, վերստուգող յանձնաժողովի անդամներ, նոյնպէս և պէտք է քննվեն անցեալ 1902 թւականի հաշիւները և ներկայ 1903 թւականի նախահաշիւները: Վերջում տեղի կունենայ ընդհանուր ընթրիք անդամների համար, 1 ր. 20 կոպէկ վճարով: 1—4

„Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի" 1903

Զատկէն առաջ կը հրատարակենք «Գեղունին» մինչոյն ծաւալով և փոխանակ 6-ի, 10 թերթ միասին կազմված և հիանալի կողքով: Խմբագրութիւնս և տպարանի վարչութիւնս այս տարուան «Գեղունին» գերազանցապէս չքեղ և նախանձելի ընելու համար ամեն ճիգ ակած են թափել: Թերթը միշտ պայմանաժամուն լոյս կը տեսնէ: Յօդուածները և պատկերները զուտ ազգային են: «Գեղունին» պիտի ծառայէ գրական և գեղարուեստական թանկագին յիշատակարան մը ըլլալու:

«Գեղունի»-էն գոյացած մաքուր հասոյթին կէսը՝ դարձեալ ազգային որբերու և աղքատներու կը յատկացնենք: «Բազմավէպի» մէջ պիտի հրատարակենք բաժանորդաց անունները: Տասը օրինակ բաժանորդ գտնողները մէկ օրինակ «Գեղունի» նուէր կը ստանան:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

	«Բազմավէպ» (առանձին)		«Գեղունի» (առան-ին)		«Բազմավէպ» «Գեղունի» միասին	
Ոչ ապահովագրեալ	10	ֆր.	12	ֆր.	15	ֆր.
Ապահովագրեալ	13	»			18	»

Հասցէն. Rédaction du journal «Pazmaveb», St. Lazare, Venise (Italie). 1—3

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ

(ПОЛНЫЙ РУССКО-АРМЯНСКІЙ СЛОВАРЬ)

Ե. Դ Ա Ղ Բ Ա Շ Ե Ա Ն Ի

Լոյս տեսաւ ե ր ր ո ր դ պ ր ա կ ը, գինն է 1 րուբլի, ճանապարհածախսով 1 ր. 15 կոպէկ: Բառարանի բաժանորդագինն է 6 րուբլի: Մինչև չորրորդ պրակի լոյս տեսնելը 3 րուբլի. ուղարկողը կը համարվի բաժանորդ և անյապաղ կը ստանայ արդէն լոյս տեսած պրակները: Չ ո ր ր ո ր դ պ ր ա կ ի լ ո յ ս տ ե ս ն ե լ ո վ բ ա ժ ա ն ո ր դ ա գ ր ո ւ թ ի ւ ն ը կ ը փ ա կ վ ի: Դիմել հեղինակին Тифлисъ, Армянская Семинарія, А. С. Дагбашьяну և կամ книжный магазинъ „Гутенбергъ".

Ծ ա ն օ թ. Նոր պրակը ստանալիս ապառիկները պէտք է վճարել: 2—2

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

Баку, домъ Красильникова, противъ армянской церкви.

Ընդունելութիւնը սկսվում է երկրորդ կիսամեակից (Յունվարից) և պատրաստվում են երեխաները միջնակարգ դպրոցների համար: 3—10

Ոսկի 1865 թ. Ոսկի 1880 թ.

Ս.-Պետերբուրգ 1870 թ.

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ

Նիժնի-Նովգորոդ 1896 թ.

ԵՒ ՌԵՏԻՆԻ ՈՒՐԻՇ ԻՐԵՂԷՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒ (GRAND-PRIX)

Պարիզի ցուցահանդէսում տրված է Ռուսաստանից ՄԻԱՅՆ

ՌԷՏԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

որ հիմնված է 1860 թւականին

Խնդրում ենք Ռ Է Տ Ի Ն Ի Կ Ր Կ Ն Ա Կ Օ Շ Ի Կ Ն Ե Ր փնելիս ուշադրութիւն դարձնել կրունկներ հետեւեալ կնիքի վրա



Մասնաւոր ընկերութեան ֆաբրիկութեան «1860» թւականի եւ «Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ», խօսքերի վրա՝ կարմիր եռանկիւնու մէջ (գործարանի կնիքը):

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՎԱՃԱՌ ԿԱՏԱՐՈՒՄ Է

ԼԷՕՊՕԼԴ ՆԷՑՇԷԼԷՐ" առեւտրական տունը

Ս.-Պետերբուրգում, Մոսկվայում, Բիգայում, Օդեսայում, ՌՈՍՏՈՎՈՒՄ ԴՕՆԻ ՎՐԱ Եկատերինբուրգում, Իրկուտսկում եւ Խարկովում.

19—35